

Ա Ր Ճ Ա Ն Ա Ղ Ր ՈՒ Յ ՈՒ Ն
2011թ-ի դեկտեմբերի 22-ի Արտանիշ համայնքի ղեկավարի 2011 թվականին կատարած
աշխատանքի հաշվետվության վերաբերյալ

նիստի նախագահ՝ Ա.Մարգարյան
քարտուղար՝ Վ.Քեշիշյան

Օրակարգի վերաբերյալ արտահայտվեց Արտանիշ համայնքի ղեկավար Կարեն Շուշանյանը.

I. Քաղաքացիական պաշտպանության ոլորտում, բնագավառում՝

1. 2011թ-ին կայացվել է համայնքի ղեկավարի 14 որոշում:
2. Համայնքի ղեկավարի 12 կարգադրություն:
3. Գումարվել է ավագանու 14 նիստ, որտեղ ընդունվել է 17 որոշում:
4. Համայնքի ղեկավարի մոտ ընդունելության է եղել համայնքի 350 բնակիչ:

2011թ-ին Արտանիշ համայնքում կատարված աշխատանքների

Հ ա շ Վ Ե տ Վ ու թ Յ ու ն

I. Բյուջեի եկամուտների հաշվետվություն

h/h	Խմբերի և ենթախմբերի անվանումը	Պլան հազ.դրամ	Կատարող. հազ.դրամ	Կատար. %
1	Գույքահարկ համայնքի վարչական տարածքում գտնվող գույքի համար	184.3	109.334	59.32
2	Հողի հարկ գյուղատնտեսական նշանակու թյան հողերից	2971.9	2593.355	87.26
3	Պահուստային հողերի հողի վարձավճար	875.0	1031.762	117.92
4	Տեղական տուրքեր(ոգելից խմիչքների, ծխախոտի վաճառքի և շինարարական թույլտվության համար)	110.0	163.0	148.18
5	Այլ ոչ հարկային եկամուտներ(Միկա –Ցեմենտ ՓԲԸ-ից բարեգործական նպատակով ստացված ցեմենտի վաճառքից)	5000.0	5243.96	104.88
6	Գույքի օտարումից մուտքեր		660.0	
7	Դոտացիա	7120.7	7120.7	100
	Ընդամենը 2011թ-ին	16261.9	16922.111	104.1

2011թ-ի սեփական եկամուտներ պլանավորվել է 9141.2 հազ.դրամ, փաստորեն կատարվել է 9141.411 հազ.դրամ: Պլանավորված եկամուտները կատարվել է 100 %-ով:

II. Բյուջեի ծախսերի հաշվետվություն

h/h	Խմբերի և ենթախմբերի անվանումը	Պլան հազ.դրամ	Ծախս հազ.դրամ
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ		
	Աշխատողների աշխատավարձ	7156.8	7164.057
	Սոցիալական ապահովագրութ. վճարներ	1545.8	1545.585
	Էներգետիկ ծառայություններ/էլ.էներգիա և վառելափայտ/	300.0	300.0
	Գործուղման ծախսեր	634.6	634.6
	Գրասենյակային նյութեր	110.0	60.0
	Տրանսպորտային նյութեր	600.0	400.0
	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում	887.3	887.3
	Շենքերի և կառույցների կապ. վերանորոգում	884.6	835.8
2	Ընդհանուր բնույթի ծառայություններ		
	Համակարգչային ծառայություն	35.0	35.0
3.	Տնտեսական հարաբերություններ որից`		
	հողերի ագրոքիմիական հետազոտում	100.0	60.0
4.	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն		
	Զրամատակարարում	833.8	833.745

5	Հանգիստ, մշակույթ, կրոն /մշակութային ծառայություններ/		
	Աշխատավարձ	1404.0	1398.285
	Սոց.ապահովագրության վճարներ	354.6	353.731
	Ընդհանուր բնույթի մշակութային ծառ. /ամանորի միջոցառումներ/	380.0	380.0
	Հայաստանի համայնքների միություն	7.0	7.0
5	Կրթություն		
	Միջնակարգ մասնագիտական կրթություն/ուսման վարձ/	150.0	130.0
	Բարձրագույն մասնագիտ. կրթություն / ուսման վարձ /	320.0	320.0
	Ընդհանուր դրամաշնորհ նախադպրոցական կրթութ.	135.0	135.0
6	Սոցիալական պաշտպանություն		
	Անապահով բնտանիքներին օգնություն	1000.0	980.0
	Ընդամենը ծախսեր	16838,5	16460.1

Տարեվերջի ազատ մնացորդը՝

- Վարչական բյուջեում -454.5 հազ.դրամ
- Ֆոնդային բյուջեում – 1824.4 հազ.դրամ:

III. <<Միկա – Ցեմենտ>> ՓԲԸ – ից բարեգործական նպատակով ստացված ցեմենտի վերաբերյալ տեղեկատվություն

2011թ-ի <<Միկա – Ցեմենտ>> ՓԲԸ – ից բարեգործությամբ ստացվել է 439.82 տոննա , գումարով 16944.8 հազար դրամի ցեմենտ: Այն ծախսվել է հետևյալ նպատակների համար.

1. 99.82տոննա՝ գումարով 3869.0 հազ.դրամ տրվել է համայնքի բնակիչներին օգնություն՝ շինարարական աշխատանքների , բուժման գնալու, վառելափայտ ձեռք բերելու և այլ ծախսերի համար:
2. 59.5 տոննա՝ գումարով 2291.0 հազ.դրամ որպես ճանապարհաձախս՝ տրվել է տեղափոխողին:
3. 6.98 տոննա՝ գումարով 273.16 հազ.դրամի օգնություն է տրվել մարզի բնակիչներին:
4. 137.1 տոննա՝ գումարով 5244.0 հազ.դրամի ցեմենտ է իրացվել և մուտքագրվել է բյուջե, որպես այլ ոչ հարկային եկամուտ:
5. 51.79 տոննա՝ գումարով 2042.11 հազ.դրամ իրացվել և համայնքում մշտական բնակվող բնակիչների հողի հարկի դիմաց մուտքագրվել է բյուջե:
6. 51.5 տոննա՝ գումարով 2042.1 հազ.դրամ ծախսվել է համայնքում կատարված աշխատանքների՝ գյուղապետարանի շենքի ծածկի ագրոշիֆերի փոխարինման ցինկապատ թիթեղով, ներհամայնքային ճանապարհների խճապատման , ջրատարի ներքին ցանցի կառուցման և այլ աշխատանքների համար:
7. 22.12.2011թ դրությամբ ցեմենտի մնացորդը պահեստում 33.2 տոննա՝ գումարով 1261.6հազ.դրամ:

IV. Տեղեկություններ 2011թ-ին համայնքում կատարված աշխատանքների վերաբերյալ

1.Կատարվել է ներհամայնքային ճանապարհների խճապատում և հարթեցում:

2. Մարգալետարանի օգնությամբ կառուցվել է 1200 մետր գազատարի ներքին ցանցի և գազաբաշխման ենթակայանի կառուցում:
- 3.<< Վերջին օրերի սրբերի>> բարեգործական կազմակերպության հովանավորությամբ համայնքում կատարվել է 1500 մետր ջրատարի ներքին ցանցի փոխարինում և 3 հատ ցայտաղբյուրների տեղադրում, որի հետևանքով գյուղի բնակչությունը ապահովվել է շուրջօրյա խմելու ջրով:
- 4.Գյուղապետարանի ծախսերով կատարվել է գյուղապետարանի երկրորդ հարկի 21.6մ² պատուհանների և 2.1 մ² դռան փոխարինման եվրո-լուսամուտներով, և շենքի ներքին հարդարման աշխատանքներ:
- 5.<<Միկա –Ցեմենտ>> ՓԲԸ-ից բարեգործությամբ ստացված ցեմենտով կատարվել է գյուղապետարանի շենքի ազդրձիֆերի փոխարինում ցինկապատ ձիֆերով:
- 6.Գյուղապետարանի ծախսերով կատարվել է Փ 75մմ տրամաչափի, 100մետր և Փ63 մմ տրամաչափի 250 մետր ջրատարի խողովակների փոխարինում:
7. Թվով 24 միայնակ, բազմանդամ և սոցիալապես անապահով ընտանիքների ցույց է տրվել դրամական օգնություն:
- 8.2011թ. Արտանիշի միջնակարգ դպրոցի նախակրթարանին համայնքի բյուջեից հատկացվել է 135.0 հազ. դրամ գումար և ձմեռացման համար ցույց է տրվել վառելափայտի օգնություն:
Համայնքի ղեկավարի մեկ տարվա կատարած աշխատանքների հաշվետվությունից հետո ելույթով հանդես եկան համայնքի բնակիչներ՝ Արթուր Գասպարյանը, Արայիկ Մարգարյանը, Արտեմ Աբրահամյանը, Ալբերտ Մարգարյանը, Վրեժ Մանուչարյանը և այլոք:
Ելույթով հանդես եկող բոլոր բնակիչները իրենց շնորհակալությունն էին հայտնում համայնքի ղեկավար Կարեն Շուշանյանին համայնքում կատարված աշխատանքների, ինչպես նաև բնակչությանը ցույց տրված սոցիալական օգնության համար:
Վերը շարադրվածը և ներկայացվածը դիտարկվեց համայնքի բնակիչների կողմից և՝

Որոշեցին

- 1.Համայնքի ղեկավարի մեկ տարվա կատարած աշխատանքը համարել բավարար:
- 2.Աշխատանքներ տանել և բյուջեում 2012 թ. համար անհրաժեշտ գումար նախատեսել հովանավոր կազմակերպության միջոցով գազատարի ներքին ցանցի կառուցման աշխատանքների ավարտման և բնակչությանը գազով ապահովելու համար:

Նիստի նախագահ՝
քարտուղար՝

Ա.Մարգարյան
Վ.Քեշիշյան